Սիւնեաց մեծ անապատի միաբաններիցն էր Շամքորի ձորեցի Դաւիթ եպիսկոպոսը, որ հիմնեց նոյն ձորի մէջ Չարէքագէտի անապատը, ուր կազմոեցաւ «Անստացոած» կոչոած ճգնաւորների միաբանութիւնը:

Սիւնեաց մեծ անապատի միաբաններիցն էր Կարապետ եպիսկոպոս վաղարշապատցին, որ հիմնեց Սեւանայ կղզու անապատը:

Սիւնեաց մեծ անապատի միաբաններիցն էր Կարապետ եպիսկոպոս տաթեւացին եւ Տէր-Կիրակոս տրապիզոնցին, որ հիմնեցին Քշտաղի Հաչանց գիւղի անապատը:

Սիւնեաց մեծ անապատի միաբաններիցն էր երեւելի Մովսէս վարդապետ Սիւնեցին, որ հիմնեց Անանիա Առաքելոյ անապատը Երեւան քաղաքում, իսկ յետոյ, կաթողիկոս ընտրուելով, նորոգեց աւերակ դարձած Էջմիածինը:

Սիւնեաց մեծ անապատի աշակերտ էր Փիլիպոս վարդապետ Աղբակեցին, որ Մովսէսից յետոյ հայոց կաթողիկոս ընտրուեցաւ: Դա իր նախորդի նման շատ նորութիւններ արեց Էջմիածնում, կառուցեց գեղեցիկ զանգակատունը, նորոգեց Ս. Գայիանէի եւ Հռիփսիմէի վանքերը, նորոգեց Օշական գիւղի Ս. Տաճարը, որ էր հանգստարան սրբոյն Մեսրոպի, նորոգեց եւ Բջնի գիւղի Ս. Աստուածածնի տաճարը:

Յիշեալ երկու կաթողիկոսների՝ Մովսէսի եւ մանաւանդ Փիլիպոսի օրերում հիմնուեցան եւ նորոգուեցան ուրիշ շատ վանքեր ու եկեղեցիներ: Ջուղայեցի Հակովբ վարդապետը, որը Փիլիպոսից յետոյ կաթողիկոս դարձաւ, նորոգեց Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը: Մեղրեցի Եսայի վարդապետը (Մովսէս կաթողիկոսի աշակերտը) նորոգեց Երնջակայ Ս. Կարապետի վանքը: Վաղարշապատցի Զաքարիա վարդապետը (դարձեալ Մովսէս կաթողիկոսի աշակերտը) նորոգեց Յովհաննա վանքը Արագածի ստորոտներում: Մկրտիչ եպիսկոպոսը նորոգեց Թադէոս առաքելոց վանքը: Արտաղ գաւառում: Մարտիրոս եպիսկոպոսը նորոգեց Ս. Գեւորգի վանքը Մուղնի գիւղում, Կարբիի մօտ, Արագածի ստորոտներում: Ոսկան վարդապետ Երեւանցին նորոգեց Ս. Սարգիս զօրավարի վանքը Ուշի գիւղում, Կարբիի մօտ, նոյնպէս Արագածի ստորոտներում: Այլեւս չեմ խօսում ուրիշ շատ վանքերի մասին, որոնք կամ նորից շինուեցան կա՛մ բոլորովին աւերակ լինելով, նորոգուեցան զանազան տեղերում: Եւ այդ բոլորը կատարուեցաւ Շահ-աբասի արշաւանքների ժամանակ, կամ անմիջապէս նրա արշաւանքներից յետոյ: